Հաստատում եմ՝

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Գիտության գծով պրոռեկտոր Պ. Ավետիսյան

09 սեպտեմբերի 2024 թ.

ԿԱՐԾԻՔ

(առաջատար կազմակերպության)

ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցող Սոնա Միսակի Մխիթարյանի **«ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրի շուրջ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դիսկուրսը»** թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հաստատվել է

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի 2024 թ. սեպտեմբերի-ի 6-ի նիստում: Նիստին մասնակցում էին փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Հ. Լ. Սարգսյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Ենգոյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Ս. Դավթյանը, քաղ. գիտ. թեկնածու Ն. Ա. Դունամալյանը, քաղ. գիտ. թեկնածու Ս. Ս. Շիրխանյանը, ավագ դասախոս Մ. Լ. Հարությունյանը, դասախոսներ Ն. Ի. Մարգարյանը, Ի. Ա. Քարամյանը:

Սոնա Միսիթարյանի «ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրի շուրջ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դիսկուրսը» թեմայով ատենախոսությունը արդիական և գիտագործնական կարևորություն ունեցող աշխատանք է: Սույն թեկնածուական ատենախոսության արդիականությունը պայմանավորված է մի քանի գործոններով: Նախ և առաջ, թեմայի արդիականությունը պայմանավորված է Արևելյան գործընկերության ծրագրի (այսուհետ՝ ԱԳ) ներկայիս վերափոխմամբ, որը համընկնում է ծրագրի անդամ երկրներում ներքաղաքական վերադասավորումների, ինչպես նաև ԱԳ տարածաշրջանում աշխարհաքաղաքական տարբեր կենտրոնների ինտենսիվ մրցակցության հետ: Հաշվի առնելով, որ ԱԳ ծրագիրն ունի առանձնակի կարևորություն ՀՀ-ԵՄ հարաբերությունների համատեքստում, ինչպես նաև արժևորելով ծրագրի ներքո համաեվրոպական կուսակցությունների ուրույն դերակատարումը, ատենախոսությունն

ավելի քան արդիական է: Չնայած «Արևելյան գործընկերությունը» եղել է մի շարք հետազոտությունների առարկա, այնուամենայնիվ հայրենական և ԱլԳ տարածաշրջանի ակադեմիական հանրույթում եզակի են կամ բացակայում են ծրագրի շրջանակում համաեվրոպական կուսակցություններին առնչվող ուսումնասիրությունները: Ավելին, հաշվի առնելով համաեվրոպական կուսակցությունների բազմամյա գործունեությունը, քաղաքական ու կուսակցական համագործակցությունը ԱլԳ անդամ երկրների կուսակցությունների և տարբեր կառույցների հետ ինչպես ԱլԳ ծրագրի շրջանակում, այդպես էլ այդ շրջանակից դուրս, ատենախոսության արդիականությունն ավելի քան ակնհայտ է:

Հետազոտության գիտական նորույթը պայմանավորված է համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների՝ ԱլԳ ծրագրի շուրջ դիսկուրսի համապարփակ ուսումնասիրությամբ: Ատենախոսության գիտական նորույթը ձևակերպված է առանձին դրույթներով: Հեղինակի կողմից համաեվրոպական կուսակցությունների և Եվրոխորհրդարանի համապատասխան քաղաքական խմբակցությունների դիսկուրսի աշխարհաքաղաքական, ժամանակագրական, արժեքահեն-գաղափարական ու քաղաքական անպեկտների քննությունն ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական կարևոր նշանակություն:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Հեղինակը ատենախոսության շրջանակում հանգամանորեն վերլուծել է համաեվրոպական կուսակցությունների խորհրդարանական գործունեության կայացման և զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև տվյալ կուսակցությունների և Եվրոխորհրդարանի խմբակցությունների դերը ԵՄ արտաքին քաղաքականության ձևավորման ու իրականացման գործընթացներում: Ատենախոսության առաջին գլխում հեղինակը հանգամանորեն հետազոտել է ԵՄ արտաքին քաղաքականության, ներառյալ ընդլայման և տարածաշրջանային ծրագրերի շրջանակում, համաեվրոպական կուսակցությունների դերակատարումը և դասակարգել վերոնշյալ կուսակցությունների գործունեության երկու մակարդակ՝ ֆորմալ և ոչ ֆորմալ: Հեղինակը հարում է այն տեսակետին, որ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դերը ԵՄ արտաքին քաղաքականության մշակման և իրագործման հարցում որոշիչ չէ, սակայն

վերոնշյալ կուսակցությունները, հանդես գալով որպես ԵՄ ռազմավարական դերակատարներ, հաճախ ոչ միայն ձգտում են իրենց արտաքին քաղաքական ազդեցությունն ուժեղացնել և կիրառել կուսակցական համագործակցության ու փոխազդեցության լծակները, այլ նաև առաջ տանել ԵՄ շահերը: Ատենախոսության խնդիրները հաստատագրելու նպատակով հեղինակը աշխատանքի երկրորդ գլխում գիտական պատշաճ մակարդակով քննության է ենթարկել ԱլԳ ծրագրի ձեռքբերումներն ու ձախողումները, ծրագրի քաղաքական համագործակցության երկկողմանի ու բազմակողմանի զարգացման բաղադրիչները, ինչպես նաև ծրագրի շրջանակում ձևավորված «Եվրանեսթ» խորհրդարանական վեհաժողովի գործունեությունը:

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է համաեվրոպական կուսակցությունների դիսկուրսի վերլուծությանը աշխարհաքաղաքական և արժեքային-գաղափարական համատեքստում: Հեղինակը հիմնավորում է, որ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների՝ ԱլԳ ծրագրի շուրջ դիսկուրսի նմանություններն ու տարբերությունները պայմանավորված են ինչպես կուսակցական տիպաբանության եվրոպամետ-եվրոսկեպտիկ, այնպես էլ աջ-ձախ առանցքներում տեղակայմամբ և բացահայտում, որ կուսակցությունների գաղափարական նմանությունը ԱլԳ ծրագրի շուրջ միևնույն դիսկուրսիվ իմաստավորման նախապայման չէ: Արժևորում ենք այն փաստը, որ համաեվրոպական կուսակցությունների՝ ԱլԳ ծրագրի իմաստավորման առանձնահատկությունները վերլուծելիս հեղինակը հանգամանորեն մեկնաբանել է այն քաղաքական գործոնները ու աշխարհաքաղաքական իրողությունները, որոնք ազդեցություն են թողել կուսակցությունների ու Եվրոխորհրդարանի համապատասխան խմբակցությունների կողմից ծրագրի շուրջ դիսկուրսիվ ռազմավարության մշակման վրա: Տվյալ գլխում առանձնակի կարևորվում և քննության է ենթարկվում Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի իմաստավորման հիմնական տարրերը, ինչպես նաև այն գաղափարական և կուսակցական գործոնները, որոնք նպաստել են կուսակցությունների դիսկուրսիվ մոտեցումների ձևավորմանը: Տվյալ ենթագլխում կատարված վերլուծությունը թույլ է տվել հեղինակին հանգել այն եզրակացության, որ ԼՂ հակամարտությունը և Հայաստանը համաեվրոպական կուսակցությունների ու Եվրոխորհրդարանի քաղաքական խմբակցությունների օրակարգում առաջնային տեղ չեն գրավել: Հեղինակը բացահայտել է, որ վերոնշյալ քաղաքական միավորները մեծ մասամբ անդրադարձել են ԼՂ-ին

հակամարտության սրման շրջանում և նախապատվությունը տվել են ԵՄ ինստիտուտների՝ հակամարտության շուրջ ձևավորված մոտեցումներին:

Ատենախոսությունն ունի բավականաչափ գիտական և աղբյուրագիտական հենք, օգտագործվել են համաեվրոպական կուսակցությունների խորհրդարանական դերակատարությանը, ԱլԳ ծրագրի զարգացմանն ու ԵՄ դիսկուրսիվ ռազմավարության շուրջ տարատեսակ գիտական հետազոտություններ, ԵՄ կառույցների ու հեղինակավոր ուղեղային կենտրոնների ուսումնասիրություններ ու պաշտոնական փաստաթղթեր: Գնահատելի է այն հանգամանքը, որ հեղինակը համապարփակ և բազմակողմանի քննության է ենթարկել 2009թ. մայիս–2022թ. փետրվար ժամանակաշրջանն ընդգրկող մեծաքանակ փաստական աղբյուրներ, ներառյալ կուսակցությունների ընտրական ծրագրերը, ԱլԳ ծրագրի շուրջ արված հայտարարությունները, կուսակցության ներկա և նախկին նախագահների ու անդամների հայտարարությունները, Եվրոխորհրդարանի համապատասխան քաղաքական խմբակցությունների պաշտոնական կայքերը և ղեկավարների, խոսնակների ու անդամների դիսկուրսները, ներառյալ պաշտոնական սոցիալական էջերում արված գրառումները: Վերլուծության ընթացքում նաև համեմատական քննություն է անցկացվել համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների՝ Եվրոպական խորհրդարանում և խորհրդարանից դուրս արծարծված ԱլԳ ծրագրի շուրջ դիսկուրսների միջև:

Իր առջև դրված հետազոտական խնդիրների իրականացման համար հեղինակը կիրառել է համապատասխան որակական վերլուծության մեթոդները, որը հաջողությամբ փոխլրացվել է Բրյուսելում կատարված դաշտային աշխատանքի հետ:

Ատենախոսությունը կարող է օգտակար լինել որպես գիտական աղբյուր հետագա ուսումնասիրությունների համար՝ նպաստելով հետազոտության թեմայի վերաբերյալ տեսական պատկերացումների ընդլայնմանը: Ատենախոսության արդյունքները, տեսական ու գործնական ընդհանրացումները, նորովի մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են կիրառվել ինչպես ՀՀ, այնպես էլ ԱլԳ տարածաշրջանի պետական կառույցների, ազգային խորհրդարանների, կուսակցությունների և այլ հասարակական-քաղաքական կառույցների կողմից ինչպես ԱլԳ ծրագրի շրջանակում, այնպես էլ ծրագրից դուրս համաեվրոպական կուսակցությունների և Եվրոխորհրդարանի խմբակցությունների հետ համագործակցության հաստատման ու խորացման, ջատագովության և լոբբիստական

աշխատանքների իրականացման նպատակով: Այն նաև որոշակի ներդրում է թեմայի հետազոտության հայրենական ջանքերում՝ հաշվի առնելով ԱլԳ տարածաշրջանում և հատկապես Հայաստանում համաեվրոպական կուսակցությունների շուրջ ուսումնասիրությունների սակավաթվությունը:

Ատենախոսությունը, բնականաբար, զերծ չէ որոշ թերություններից: Անհրաժեշտ ենք համարել առանձնացնել հետևյալ դիտողությունները.

1. Ներածությանը վերաբերող դիտողություններ.

   ա. Հիմնախնդրի գիտական մշակվածությունը ընդունված է ներկայացնել թեմայի արդիականությունից անմիջապես հետո:

   բ. Դատելով ատենախոսության անվանումից, հետազոտության օբյեկտը և առարկան անհրաժեշտ էր ներկայացնել ավելի հստակ: Մեր կարծիքով, հետազոտության օբյեկտը ոչ թե ընդհանրապես «արևելյան գործընկերություն» ծրագրի շուրջ դիսկուրսն է՝ որպես ԵՄ դերակատարների արտաքին քաղաքականության բաղադրիչ», այլ այն, ինչը ներկայացված է իբրև հետազոտության առարկա՝ «համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների ԱլԳ ծրագրի շուրջ դիսկուրսը» (էջ 8):

   գ. Ատենախոսության մեթոդաբանական հիմքը ներկայացնելիս, ատենախոսը թվարկում է կոնկրետ մեթոդները, որոնք կիրառվել են աշխատանքում: Սակայն որևէ անդրադարձ չկա տեսական-մեթոդաբանական հիմքերին, որոնցից ելնելով իրականացվել է հետազոտությունը: Ընդհանրապես, ցանկալի կլիներ, որպեսզի տեսական մասը ներկայացվեր ոչ միայն ներածությունում, այլ առաջին գլխում առանձին ենթագլխով, ինչը միգուցե թույլ կտար մասամբ հաղթահարել ատենախոսության հիմնականում նկարագրական բնույթը:

2. Որոշակի դիսբալանս է առկա ատենախոսության կառուցվածքում. առաջին և երկրորդ գլուխները ունեն ընդհանուր նկարագրողական բնույթ, այնտեղ ներկայացվում է համաեվրոպական կուսակցությունների կայացման գործընթացը և «Արևելյան գործընկերության» նախագծի մանրամասները, իսկ աշխատանքի բուն հետազոտական պրոբլեմին փաստորեն նվիրված է միայն երրորդ գլուխը:

3. Ցանկալի կլիներ, որ հեղինակը հստակեցներ, թե՞ ինչ է հասկանում «համաեվրոպական կուսակցութենների դիսկուրսի» տակ, ինչպես նաև նշել այն

քաղաքական խմբերը, որոնք ազդում են այդ դիսկուրսի ձևավորման վրա: Ընդ որում, հարց է առաջանում, ինչու է հեղինակը օգտագործում «դիսկուրս», այլ ոչ թե հայերեն գիտական տերմինաբանության մեջ արմատացած «խոսույթ» տերմինը: Նաև կարելի էր անդրադառնալ խոսույթի վերաբերյալ ստրուկտուրալիստական կամ պոստմոդեռնիստական գիտական մոտեցումներին (դա կարելի էր անել տեսական հինքերին վերաբերող վերոնշյալ ենթագլխում):

4. Աշխատանքում գերակշռում է համաեվրոպական կուսակցությունների ներկայացուցիչների կողմից ԱլԳ երկրներում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ հայտարարությունները (տես՝ էջեր 86-89), որոնք էլ, համաձայն հեղինակի դիրքորոշման՝ ներկայացնում են ընդհանուր խոսույթը:
5. Տպավորություն է ստեղծվում, որ վերջին ենթագլուխը, նվիրված Հայաստանին և Լեռնային Ղարաբաղին վերոնշյալ դիսկուրսում, տրամաբանորեն այնքան էլ կապված չէ նախորդ շարադրանքի հետ և արհեստական է տեղավորված աշխատանքի վերջում: Այդ ենթագլխում ցանկալի կլիներ անդրադառնալ ՀՀ քաղաքական կուսակցությունների կողմից համաեվրոպական կուսակցություններին միանալու շարժառիթներին և ներքին քաղաքականության մեջ դրանց շահարկմանը: Ինչպես նաև գնահատել ՀՀ կուսակցությունների համաեվրոպական ժողովրդավարական գործընթացին ներգրավվելու արդյունքները:

Ատենախոսության եզրակացությունները հիմնավոր են և փաստարկված, աշխատանքը ունի գիտական պատշաճ մակարդակ և հայեցակարգային հիմնավորված ապարատ: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը՝ արտացոլելով դրա հիմնական դրույթները: Սոնա Մխիթարյանի հեղինակած հոդվածները արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթներն ու բովանդակությունը:

ՀՌՀ քաղաքագիտության ամբիոնը՝ որպես առաջատար կազմակերպություն, գտնում է, որ ***Սոնա Միսակի Մխիթարյանի*** քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ***«ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրի շուրջ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դիսկուրսը»*** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական

- **«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
Քաղաքագիտության ամբիոնի վարիչ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ. Լ. Սարգսյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ. Լ. Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու Ռ. Կասաբաբովա